

ՄԵՐ ՀՈՒՆԵԼՅԱՐՆԵՐԸ

Ա. Ա. ԱՔՐԱՀԱՄՅԱՆ

(Ծննդյան 60-ամյակի առթիվ)

Լրացավ գիտության վաստակավոր գործիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՍՍՀ ԳԱ րդրակից անդամ Ա. Աբրահամյանի ծննդյան 60 տարին: Հայագիտության շնորհիվ նվիրյալ Ա. Աբրահամյանը ծնվել է 1918 թ. սեպտեմբերի 17-ին Սևանի շրջանի Գեղամավան (Նանոբ) գյուղում, հողագործի ընտանիքում: Միջնակարգ դպրոցն ավարտելուց



հետո աշխատել է Հրազդանի շրջանի դպրոցներում որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ, ուսմասվար, դիրեկտոր: 1943 թ. ավարտել է Երևանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի հեռակա բաժնի լեզվագրական ֆակուլտետը և հաջորդ տարին ընդունվել ասպիրանտուրա՝ հայոց լեզվի պատմության գծով: 1948 թ. պաշտպանել է թեկնածուական դիսերտացիա, 1963 թ.՝ դոկտորական դիսերտացիա, իսկ 1964 թ. ստացել է պրոֆեսորի կոչում: 1944 թ. աշխատում է Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտում՝ վարելով գրաբարի, ժամանակակից հայոց լեզվի տեսության, լեզվաբանության ներածության դասընթացները: 1960 թ. սկսած նույն ինստիտուտի հայոց լեզվի ամբիոնի վարիչն է: 1950—1959 թթ. աշխատել է ՀՍՍՀ ԳԱ Հ. Անանյանի անվան լեզվի ինստիտուտում որպես ավագ գիտաշխատակից և արդի հայերենի բաժնի վարիչ:

Մեծ է Ա. Աբրահամյանի գիտական վաստակը: Նա շուրջ 80 աշխատությունների հեղի-

նակ է: Կարելի է նշել նրա գիտական գործունեության երկու հիմնական բնագավառ՝ լեզվաբանական-ֆեռականագիտական և բանասիրական-տեքստաբանական, թեև այդ երկուսն էլ սերտորեն միահյուսված են իրար: Բանասիրական գործունեությունը մեծ չափով լեզվաբանական ուղղվածություն ունի: Առաջին մենագրական աշխատությունը կապված է նրա գիտամանկավարժական գործունեության հիմնական բնագավառի հետ: Երկար տարիներ զբաղվելով հայոց լեզվի պատմության հարցերով՝ Ա. Աբրահամյանը մշակեց գրաբարի այնպիսի դասընթաց, որը էապես տարբերվում էր մինչև այդ եղածներից. Բանն այն է, որ մինչև 1940-ական թթ. գրաբարի դասավանդումը պատշաճ տեղ չուներ բանասիրական կրթության համակարգում: Ելնելով այն իրողությունից, որ հայոց լեզվի մասնագետ դառնալու համար խիստ անհրաժեշտ է գրաբարի իմացությունը և այն էլ ոչ մակերեսայնորեն, Ա. Աբրահամյանը ստեղծեց «Գրաբարի ձեռնարկը» (1952 թ. և հետագա վերամշակված երեք վերահրատարակություն), որն աչքի է ընկնում խոր գիտականությամբ, փաստական նյութի առատությամբ: Դասագրքում տրված է ոչ միայն գրաբարի ֆեռականության գիտական սխեմատիկ շարադրանք, այլև ընթերցանության ընտիր նմուշներ դասական և հետագա մատենագրությունից՝ մանրակրկիտ ծանոթագրություններով: Այս հանգամանքը դասագրքին տալիս է գիտական լուրջ ուսումնասիրության բնույթ: Դասագրքի արժեքը ավելի է մեծանում գրաբարյան բնույթի բացատրական բառարանով, որն իր տեսակի մեջ յուրահատուկ է: Այսպիսի դասագիրքը հնարավորություն է տալիս գրաբար սովորել ուսանց աչլ սղբյուրների օգնությամբ, թեև մեծացնում է նրա ծավալը,

մի հանգամանք, որն այլ դեպքում դառազբքի համար բերություն կլիներ. Այս դատագրող գրաբար են սովորել և սովորում են ոչ միայն մանկավարժական բուհերի բազմաթիվ սերունդներ, այլև ըստ ինքնուրույն ուսումնասիրողներ:

Ա. Աբրահամյանն առաջիններից էր հայ լեզվաբանների մեջ, որ ուսումնասիրության առարկա դարձրեց առանձին խոսքի մասերը: Իր գիտական գործունեության զգալի մասը նա նվիրել է բայի հետազոտությանը: Դեռևս 1953 թ. հրատարակած «Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը» աշխատության մեջ Ա. Աբրահամյանը ամենայն մանրամասնությամբ բնութագրում է հայերենի դերբայները՝ նրանց բառակազմական, իմաստային, կիրառական հատկանիշներով: Ընդ որում Ա. Աբրահամյանին հաստիք է լեզվական իրողությունների բազմակողմանի պատմական բնությունը: Նա դերբայները ուսումնասիրում է ոչ միայն արդի արևելահայերենում ունեցած դրսևորումներով, այլև հայոց լեզվի պատմության ընդհանուր խնդիրներով՝ ցույց տալով դրանց արտացոլումները գրաբարում և հայոց լեզվի զարգացման հետագա շրջաններում, ինչպես և բարբառներում: Այս աշխատության մեջ Ա. Աբրահամյանը առաջ առնում է հայերենի մի նոր դերբայի (ընթացակցական) արձեմավորման խնդիրը: Դերբայներին նվիրված այս աշխատությամբ Ա. Աբրահամյանը հող նախապատրաստեց բայի բազմակողմանի և խոր ուսումնասիրության համար: Շարունակելով հետազոտությունները հայերենի բայի վերաբերյալ՝ Ա. Աբրահամյանը 1962 թ. հրապարակեց «Բայը ժամանակակից հայերենում» աշխատությունը, որն իրավացիորեն գնահատվեց որպես յուրահատուկ հանրագիտարան ժամանակակից դրական լեզվի բայի էության, նրա միավորների հանաչման, սեռի յուսաբանության և բերականական բազմազան դրսևորումների մասին: Այս աշխատությունն ամփոփում է ոչ միայն հեղինակի նախորդ տարիների, այլև ողջ հայ բերականագիտության նվաճումները՝ բնագիտական խոսքի մասի ուսումնասիրության առարկանում: Այստեղ բայն ուսումնասիրված է ողջ համակարգով: Ա. Աբրահամյանն իր հետազոտությունը տարել է բայական բառույթի կառուցվածքի բացահայտման ուղղությամբ: Ընդունելով բայական բառույթի երկու տեսակ՝ համադրական և վերլուծական (հարադրական)՝ նա ամենայն մանրամասնությամբ բնութագրում է դրանց առաջացման եղանակները: Ա. Աբրահամյանն իր ուսումնասիրությունը կատարում է համաժամանակյա և տարժամանակյա եղանակների համադրումով: Հայ բերականագիտության մեջ բայականության հարցերի բնությունը նոր չէ: Նախորդ բերականներ ևս անդրադարձել են տարբեր խոսքի մասերից բայաձևերի առաջացման խնդիրներ: Մական բայականության հարցերի համակողմանի բնությունը տրվեց Ա. Աբրահամյանի այս աշխատության մեջ: Նա հանգամանորեն սերկայացնում է համադրական բայաձևերի առաջացման բոլոր ուղիները:

Ա. Աբրահամյանը վերանայել է մի շարք ըմբռնումներ և տարածում գտած հասկացություններ: Առանձնապես արժեքավոր են նրա դրույթները բայաձևացման դասակարգման վերաբերյալ: Անցյալում բայաձևացման մի տեսակը ստեղծանք է անվանվել՝ առանց լուրջ կոմպոնենտների: Ա. Աբրահամյանը ցույց տվեց, որ *ան, են, ն, չ* անանքները բաղադրական, հիմնականում մասնիկներ են և իբրև ադյուկտիվ հակադրվում են բուն բերականական մասնիկներին (*վ, առ, ոտ, կոտ, տ, աչք, եջք, ցն*): Առաջիններն անմիջապես բաղադրում են բայաձևեր և գոյականաբար ունենում են բերականական իմաստներ, երկրորդները սեռի և կերպի ցուցիչներ են: Ա. Աբրահամյանը առաջ մղեց սեռի ըմբռնումը՝ բերականական այդ կարգը բնականորեն իմաստային, ձևակազմական-ձևաբանական և կապակցական հատկանիշներով: Օգտվելով հայ բերականագիտության նվաճումներից՝ նա ընդունեց *սեռադասեր, սեռեր և սեռային առումներ* հասկացությունները, առաջինների համար օգտագործելով առաջադրված *անցողական, անանցողական, երկրորդների համար ընդունելով ներգործական, կրավորական, չեղոք, երկրորդների համար առաջադրված պատճառական սեռային առում, միջին-անդրադարձ սեռային առում* տերմինները: Այսպիսով, սեռի հարցում նրա երկաստիճան դասակարգումն ունի հետևյալ պատկերը. անցողական սեռադաս, որի մեջ մտնում են ներգործական սեռը և պատճառական սեռային առումը, անանցողական սեռադաս, որին պատկանում են կրավորական, չեղոք սեռերը և միջին-անդրադարձ սեռային առումը:

Բայասեռի բնությունից հանած նրա եզրակացությունները միանգամայն ընդունելի են: Մասնավորապես հետաքրքիրն են Ա. Աբրահամյանի ըմբռնումները սեռային տեղաշարժի և կրկնասեռության երևույթների մասին: Նշելով այն բանից, որ լեզվական իրողությունները գտնվում են անընդհատ զարգացման մեջ՝ Ա. Աբրահամյանը ցույց է տալիս, որ բայասեռը անփոփոխ չէ, և սեռային տեղաշարժի մեջ էական դեր ունեն բառիմաստի փոփոխությունները:

Բայի սեռային տեղաշարժի առաջին աստիճանը կրկնապատկվում է, որից կարող է անցում կատարվել կրկին միասնության՝ նախորդի կորուստով: Աշխատությունն առավել փանաթեզավոր է, ոչ միայն բնագիտական հարցերի խորությամբ և լայնքով, այլև նշանով, որ այնտեղ գործածված են մեր դասական գրականության և խոսակցական լեզվի բնորոշ նմուշներ, և հեղինակն ամենայն բարեխղճությամբ արժեքավորել է դրանք, քան հարկին նորմավորելով այս իրողությունները, մերձելով խորքն ու անհրաժեշտությունը: Ինչպես վերնագրից է երևում (առաջին հատոր), բայի հետազոտությունը դեռևս ավարտված չէ: Ա. Աբրահամյանը շարունակում է իր մանրակրկիտ հետազոտությունը բայական իրողությունների վերաբերյալ, և հավանաբար մոտ ապագայում կհրատարակվի այդքան արժեքավոր աշխատության երկրորդ դիրքը:

Որ Ա. Աբրահամյանի հետազոտությունները հայերենի բայի վերաբերյալ հաջողությամբ կավարտվեն, վկայում են նրա հրապարակած մի փաթեթ հոդվածներ, որոնցից առավել հետաքրքիրն են «Ժամանակակից հայերենի կերպավորության վերլուծական մի փանի դրսևորումների բնույթագրման փորձ» («Երբեք հասարակական գիտությունների», 1972, № 10), «Վերլուծականությունը հայերենի տարբեր մակարդակներում» («Պատմա-բանասիրական հանդես», 1972, № 3): Մասնակից առաջինում Ա. Աբրահամյանը համապատասխան փաստերով ցույց է տալիս բայական կերպավորության մի փանի դրսևորումներ (մեծականության, սկսողականության, շարունակականության, անընդհատականության և այլն) շարանյութական, բառական-բառակազմական մակարդակներում, հնչյունների միջոցով և այլն: Նա որոշակիորեն զարգացնում է այն դրույթը, որ կերպավորությունն արդի հայերենում միջմակարդակային բնույթ ունի:

Որոշակի արժեք ունեն Ա. Աբրահամյանի ուսումնասիրությունները հայոց լեզվի պատմության: առանձին հարցերի ուղղությամբ: Նրա հրատարակածներից հետաքրքիրն են «Փաստեր հայերենի պատմական հնչյունափոխության մի փանի երևույթների ժամանակաշրջանի վերաբերյալ» հոդվածը (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1957, № 4):

Հայագիտության մեջ ընդունված է եղել $w > o$ հնչյունափոխությունը վերագրել XII—XIII դարերին: Վիժազրական և այլ կարգի փաստերով Ա. Աբրահամյանը դալիս է այն եզրակացության, որ w երկրաբանի վերածումը o ձայնավորի տեղի է ունեցել X—XI դարերում: Բառավերջում w , n ձայնավորներից հետո j -ի անկումը կատարվել է IX դարում: $h > d$ հնչյունափոխության ժամանակը հայագիտության մեջ ճշտված չէր: Ա. Աբրահամյանը ցույց է տալիս, որ այդ հնչյունափոխությունը սկսված է եղել IX դարից:

Ա. Աբրահամյանի հոդվածների մի մասը անցյալի հայագետների գործունեության արժեքավորման է նվիրված («Հ. Անույանի բազմաճյուղի բնականության նոր հատոր» («Լիակատար բերականություն հայոց լեզվի», հատ. 3), «Ն. Բյուզանդացու կյանքն ու գիտական գործունեությունը», «Ա. Այտրեյանի «Փնեական բերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի» աշխատության «Նախալավիդը» և այլն): Իրանցում նա ամենայն բարեխղճությամբ վեր է հանել երախտավոր լեզվաբանների դերը հայագիտության զարգացման գործում:

Ա. Աբրահամյանն զբաղվել է նաև հայոց լեզվի դասավանդման սկզբունքների մշակման հարցով: Այս տեսակետից արժեքավոր է «Հայոց լեզվի ուսուցման հիմունքները միջնակարգ դպրոցում» (1950 թ.) աշխատանքը:

Ա. Աբրահամյանի գիտական գործունեության երկրորդ բնագավառը դասական մատենագրության երկերի բարգմանությունը և հրատարակության պատրաստումն է: Այս ուղղությամբ կատարած աշխատանքի մեջ անգնահատելի են հզնիկ Կողբացու «Եղծ աղանդոցի» հրատարակությունը՝ իր արևելահայերեն բարգմանությամբ, ներածությամբ և ծանոթագրություններով (1970 թ.):

V դարի մեծ փիլիսոփա Եզնիկի բնագրում, նյութի առանձնահատկություններով պայմանավորված, կան նաև դժվար հասկանալի մոտեր: Ա. Աբրահամյանը հմտորեն բաժանեց է հին դարերի փիլիսոփայական ուսմունքների էության մեջ՝ տալով բնագրին հարազատ բարգմանություն: 495 կետով ուղծված ծանոթագրությունները բնագրագիտական, փիլիսոփայական, լեզվաբանական բարձրորակ բնություն են: Այդ երկի հրատարակումից հետո Ա. Աբրահամյանը առանձին հոդված նվիրեց «Եղծ աղանդոցի» տեմինաբանության հարյին՝ ցույց տալով այն հսկայական դերը, որ մեծ փիլիսոփան կատարել է գիտական-փիլիսոփայական տեմինաբանության սկզբնավորման գործում («Պատմա-բանասիրական հանդես», 1971, № 3):

Ա. Աբրահամյանը մասնակցել է Ազարանգեղոսի, Բուզանդի և այլ հեղինակների երկերի հրատարակության իրականացմանը:

Մեծ է Ա. Աբրահամյանի վաստակը «Հայկական համաբարբառ բարտարանի» սկզբունքների մշակման և մի շարք համաբարբառների ստեղծման գործում: Նա խմբագրել է Կողբա-

ցու, Բուզանդի համաբարբառները, խորհրդատու է եղել նաեկացու «Մատյան ողբերգության» երկի համաբարբառի կազմության գործում: Պետք է նկատի ունենալ, որ համաբարբառի խմբագրումը սովորական խմբագրական գործ չէ: Դա հավասար է հեղինակային աշխատանքի: Յուրաքանչյուր համաբարբառի խմբագրում պահանջում է մի քանի տարվա լարված աշխատանք: Միայն հայ մատենագրության և գիտության զարգացման նկատմամբ արտակարգ սերն ու նվիրվածությունը կարող են դրդել կատարելու այդպիսի աշխատատար գործ:

Ա. Աբրահամյանի գործունեության ոչ պակաս կարևոր բնագավառներից մեկը մանկավարժականն է: Հենց սկզբից էլ նա իր կոչումը համարել է մանկավարժ լինելը: Նրա խոսքը ծանրակշիռ է ոչ միայն այն պատճառով, որ նա ունի մանկավարժական բնատուր շնորհի, այլև նրանով, որ նյութի համակողմանի ու անբերի իմացությամբ զերում է ունկնդիրներին: Ամենադժվար ու խրթին նյութն էլ Ա. Աբրահամյանի կողմից հաղորդվում է մատչելի լեզվով՝ երկար ժամանակ չընշխելով հիշողությունից: Այնքան հանելի է նրան լսելը, որ դասաժամը մի ակնթարթ է րվում: Պատահական չէ, որ նախկին սաները երազում են կրկին ու կրկին ունկնդրել սիրելի դասախոսին: Նա հոգատարությամբ անեցրել և անեցնում է լեզվաբանական կադրեր: Արտակարգ բարեխղճությունը, պահանջկոտությունը ասպիրանտների և դիսերտանտների նկատմամբ այն նախապայմանն են, որոնց շնորհիվ առաջադիմում են Ա. Աբրահամյանի սաները:

Նրա ղեկավարությամբ քեկնածուական դիսերտացիաներ են պաշտպանել մի քանի տասնյակ լեզվաբաններ: Նրա սաների րվում կան նաև դոկտորներ և պրոֆեսորներ:

Լայն է Ա. Աբրահամյանի հասարակական գործունեության շրջանակը: Նա ՀՍՍՀ լուսավորության մինիստրության, ապա նաև բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության մինիստրության գիտամեթոդական խորհրդի, մի քանի գիտական խորհուրդների, ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին կից տերմինաբանական կոմիտեի անդամ է, եղել է երևանի Բաղ-սովետի ղեկավար:

Գիտամանկավարժական և հասարակական ակտիվ գործունեության համար 1965 թ. նրան շնորհվել է ՀՍՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչում: 1977 թ. բնորվել է ՀՍՍՀ ԳԱ րդրակից անդամ:

Ա. Աբրահամյանը պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի շխանանով և մեդալներով, ՀՍՍՀ Գերագույն սովետի մի քանի պատվոգրով:

Այսօր էլ Ա. Աբրահամյանը լեցուն է ավյունով և մեծ ծրագրերի մտահղացումով: Ցանկանալով, ուրեմն, սիրելի հորեկարին երկար տարիների Բաղսովետի և ստեղծագործական նորանոր հաջողություններ:

Պրոֆ. Վ. Ա. ԲԱՍՅԱՆ